*Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 7. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանում առկա տեղեկատվության գաղտնիությունը**

1. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանում առկա տեղեկատվությունը, ներառյալ՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումների թղթային արխիվում պահվող տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

2. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանից վկայականները, տեղեկանքները կամ այլ տեղեկատվությունը տրամադրվում են սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

3. Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի ձևավորման և վարման նպատակներով համապատասխան լիազոր մարմիններին, դատարանին (դատավորին), դատախազությանը, նախաքննության մարմիններին՝ նախաձեռնված քրեական վարույթների կամ հարուցված քաղաքացիական գործերի կապակցությամբ և օրենքով նախատեսված իրավասու այլ մարմինների կամ անձանց պահանջով:

4. Սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով միասնական էլեկտրոնային գրանցամատյանի տեղեկությունները հասանելի են նաև վիճակագրական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության ~~արտաքին գործերի նախարարության~~արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության էլեկտրոնային հյուպատոսական համակարգին, սոցիալական ապահովության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը և այլ իրավասու մարմինների և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի համակցման միջոցով:

5. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանի տեղեկությունները կարող են փոխանցվել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրո: Տրամադրվող տեղեկությունների ցանկը, դրանց դիմաց վճարը և տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:

*(7-րդ հոդվածը խմբ. 09.06.22 ՀՕ-221-Ն)*